ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի քրեական իրավունքի և քրեաբանության ամբիոնը ներկայիս հաստիքակազմով ձևավորվել է 2011 թվականին:

Ամբիոնում նախատեսված է վեց հաստիք՝ ուսումնական ասիստենտ, դասախոս, ավագ դասախոս, դոցենտ, պրոֆեսոր և ամբիոնի պետ: 2020 թվականից ամբիոնը ղեկավարում է ոստիկանության փոխգնդապետ, ի.գ.թ. Հռիփսիմե Խաչատրյանը:

Ամբիոնում համատեղման կարգով և պայմանագրային հիմունքներով դասավանդում են կրթահամալիրում և ոստիկանությունում ղեկավար պաշտոններ զբաղեցնող մասնագետներ, ինչպես նաև ՀՀ դատախազության, Արդարադատության նախարարության, Փաստաբանական պալատի ներկայացուցիչներ:

Ամբիոնի գործունեության հիմնական ուղղություններն են կրթական, ուսումնամեթոդական և դաստիարակչական աշխատանքների կազմակերպումն ու իրականացումը, ամբիոնի գործունեության ուղղվածությանը համապատասխան գիտական հետազոտությունների իրականացումը, ամբիոնի ուղղվածության ուսումնական, ուսումնամեթոդական, ուսումնագործնական ձեռնարկներ, ուղեցույցներ և գիտաուսումնական այլ անհրաժեշտ նյութեր մշակելը, ատենախոսությունների վերաբերյալ առաջատար կազմակերպության կամ պաշտոնական ընդդիմախոսի կարծիքների պատրաստումը, ամբիոնին կից գիտական խմբակի գործունեության կազմակերպումը, կրթահամալիրի կողմից իրականացվող կրթության որակի ապահովման քաղաքականության իրականացմանը նպաստելը:

2020-2021 ուսումնական տարում ամբիոնի դասախոսական անձնակազմը ղեկավարում է մագիստրատուրայի 14 սովորողների մագիստրոսական թեզերը:

2012-2021 թվականների ընթացքում ամբիոնի դասախոսական անձնակազմը հրատարակել է երկու տասնյակի հասնող ուսումնական, ուսումնամեթոդական, ուսումնագործնական ձեռնարկներ, 70-ից ավելի գիտական հոդվածներ, ամբիոնի կողմից պատրաստվել են դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների վերաբերյալ առաջատար կազմակերպության կամ պաշտոնական ընդդիմախոսի 50-ից ավելի կարծիքներ:

2015-2016, 2017-2018, 2018-2019 և 2019-2020 ուսումնական տարիներին ամբիոնը ՀՀ ոստիկանության կրթահամալիրի գիտական խորհրդի կողմից ճանաչվել է գիտական գործունեության լավագույն արդյունքներն ապահովված ամբիոն: